դեպի խրամատը։ Պարիսպների մեջ բացված են հրացանաձգության համար աչքեր։

Այս պարսպապատ տարածությունից դուրս արևելյան կողմում պահպանվել է մի թաղակապ պարզ բազիլիկաձև եկեղեցի, տեղացիների ասելով՝ կուսանոց։ Պարիսպների ներքին շենքերը զբաղեցնում են միայն տարածության հարավ-արևմտյան բաժինը։ Մնացած հատվածներում նշմարվում են պատերի առանձին հետքեր։ Տեղացիք պատմում են, որ աշտարակի մոտ մինչև վերջին ժամանակներս պարզ երևում էին ջրի ավազանի կողերը. սրանք այժմ թաղված են հաստ հողի շերտի տակ։ Շենքերի կենտրոնը գրավում է մելիքական տնային եկեղեցին. դա մի թաղակապ պարզ բազիլիկա է երկու խորաններով։ Լույսը ընկնում էր առաստաղի մեջ թողած կլոր բացվածքից, որին այսօր էլ հաճախակի պատահում ենք գավառի գյուղերում կառուցված եկեղեցիներում և ավելի հարավ՝ նաև Մեղրու շրջանում։ Մելիքական եկեղեցու այս յէրիկը անձրևից պաշտպանելու համար նրա բացվածքը պսակված է եղել սյուների վրա հենված գմբեթով։ Վերջին (1931 թ.) երկրաշարժից այդ գմբեթը տապալվել է. այժմ նրա բեկորները թափթփված են շենքի ներսում։ Արևմտյան կողմում եկեղեցին ունեցել է փայտե տախտակամած պատշգամբ, ինչպես երևում է պատշգամբը պահող գերանների գլխների համար պատերի մեջ թողած ծակերից։ Խորանի՝ աբսիդի պատերի վրայից անձրևն ու ժամանակը դեռ չեն սրբել որմնանկարների՝ ֆրեսկոների պարզորոշ մնացորդները՝ սրբերի նկարներ, վեղարավոր կերպարանքներ։ Այդ որմնանկարների վրա ամեն մի այցելու իր պարտքն է համարել թողնել իր այցելության մասին հիշատակ և հավերժացրել է իր աղգանունը ածուխով, ներկով կամ փորագրություններով։ Տեղացիք վկայում էին, որ դեռ հինգ-վեց տարի առաջ գրեթե բոլոր պատերին սվաղի վրա շատ լավ են պահպանված եղել բազմաթիվ նկարներ։ Եկեղեցին ունի երկու դուռ։ Հյուսիսայինը տանում է ժայռի մեջ փորած թաղակապ փողան (անցք, կորիդոր), որից դեպի ձախ մի դռնակով մտնում ես հյուսիսից հարավ ձգվող թաղակապ զետեղարան։ Դա գուցե եղել է մի մատուռ, թեև չունի պատարագի սեղանի ոչ մի նշան, կամ՝ որ ավելի հավանական է, եկեղեցական պահեստ, իսկ դեպի աջ մտնում ես ամբողջ շենքի ճակատի երկարությամբ ձգվող մի ցածրիկ նախագավիթ, որը կազմված է երկու թաղակապ զուգահեռ սրահներից։ Սրանցից ետևինը ավելի երկար է, քան թե ճակատի կողմինը։ Վերջինիս կցված է երկու սրահների երկարությունների տարբերությանը համապատասխան լայնություն ունեցող անկյունը լրացնող մի երրորդ սրահ, որի թաղը ձգված է հակառակ ուղղությամբ՝ արևելքից արևմուտք։ Երկու սրահաշարքերը բաժանող պատի մեջ թողված են լայն կամարակապ բացվածքներ՝ իրարից երկու սյունանման որմնամասերով բաժանված։ Այսպիսով գոյացող երեք բացվածքներից երկուսը տանում են ետևի սրահից դեպի առջևինը, իսկ երրորդը՝ դեպի անկյունի սրահը, ուր մի փոքրիկ դռնակով կարելի է մտնել նաև առջևի սրահից։ Առջևի սրահի՝ շենքի ճակատի ուղղությամբ ձգվող պատի մեջ թողված է մի լայն բացվածք, որը նայում է դեպի արևելք։ Դա պիտի եղած լինի դրսից դեպի փողանը տանող մի ընդհանուր մուտք, ուր բարձրանալիս են եղել բակից մի քանի աստիճաններով, որոնք սակայն չեն պահպանվել։ Սրահները թողնում են նախագավթի տպավորություն։